ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435 136,
էլ.հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.10.2016թ.

Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Դիմում-բողոք

Հարգելի պարոն Մարգարյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (ԻԱԿ) 2016թ.-ի սեպտեմբերի 14-ին փոստով՝ պատվիրված նամակով տեղեկատվություն ստանալու հարցումներ էր ուղարկել Երևանի թիվ 3, 29, 182, 119, 103, 46, 42, 114, 94, 184 ավագ, Ա.Պուշկինի անվ. թիվ 8, Վ.Մայակովսկու անվ. թիվ 7, Ալ.Բլոկի անվ. թիվ 122, Ա.Չեխովի անվ. թիվ 55, Վ.Թոթովենցի անվ. թիվ 57, Գրիբոյեդովի անվ. թիվ 41, Ղ.Աղայանի անվ. թիվ 63, Լիսիցիանի անվ. թիվ 34, Վ.Համբարձումյանի անվ. թիվ 17, Ստ.Շահումյանի անվ. թիվ 1, Խ.Աբովյանի անվ. թիվ 2, Լ.Շանթի անվ. թիվ 4, Մ.Իշխանի անվ. թիվ 5, Ս.Սպանդարյանի անվ. թիվ 24, Լ.Տոլստոյի անվ. թիվ 128 հիմնական և թիվ 108, 87, 111, 81 միջնակարգ դպրոցներին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքարարի քանի՞ հաստիք ունի դպրոցը:
2. Որքա՞ն է սահմանված հավաքարարի հաստիքի աշխատավարձը:
3. Փաստացի քանի՞ հավաքար է ներկայումս աշխատում դպրոցում:
4. Արդյոք դասասենյակների մաքրության ապահովումը ներառվա՞ծ է հավաքարարի աշխատանքի մեջ:

Դպրոցներից 8-ը պատասխանել է ժամանակին, 4-ը՝ ուշացումով, 3-ը՝ թերի, մյուսները պատճառաբանել են, թե չեն ստացել հարցումը՝ այնինչ փոստից տեղեկացել ենք,որ ԻԱԿ-ի պատվիրված նամակները հասել են հասցեատերերին:
Ա.Չեխովի անվ. թիվ 55, Մայակովսկու անվ. թիվ 7 հիմնական դպրոցներն ու թիվ 111 միջնակարգ դպրոցը հարցումին հետևող ԻԱԿ-ի հեռախոսազանգ-ճշտմանն ի պատասխան մերժել են պատասխանել և տրամադրել համապատասխան տեղեկությունները՝ պատճառաբանելով, որ՝

- Ա. Չեխովի անվ. թիվ 55-ի տնօրենը պատասխանել է, որ չի կարող տեղեկությունը տրամադրել, քանի որ ԻԱԿ-ի հետ չեն համագործակցում և այդքան ժամանակ չունեն:
- Մայակովսկու անվ. թիվ 7 հիմնական դպրոցի տնօրենը պատասխանել է, որ իրենք իրավասու չեն պատասխան տրամադրել, Երևանի քաղաքապետարանից պետք է թույլտվություն ստանան:
- Թիվ 111 միջնակարգ դպրոցի տնօրենը պատասխանել է, որ չի ցանկանում պատասխան տրամադրել՝ թուղթն ու թանաքն ափսոս են:

Նշված երեք դպրոցների պահվածքը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների կոպիտ խախտում է և ոչ իրավաչափ անգործություն, ուստի օրենքով նախատեսված կարգով խնդրում ենք վերադասության կարգով հանձնարարել դպրոցներին ԻԱԿ-ի գրավոր հարցմանը պատասխանել գրավոր և ըստ էության:

Կանխավ շնորհակալ եմ:
ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան